Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0811.03.5 «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտության 0811.03.01.5 «Տեխնիկ-ագրոնոմ»
I. Դերը	Տարբեր տեսակի ջերմատնային տնտեսություններում մասնակցել տարածքի նպատակահարմար օգտագործման սխեմաների մշակմանը, ցանքաշրջանառության գրաֆիկի կազմմանը, ապահովել հողի միջավայրի և պայմանների համապատասխանությունը մշակվող կուլտուրայի պահանջներին, ընտրել սերմերը և տնկանյութը, դրանք նախապատրաստել ցանքի համար, կազմակերպել հողի նախացանքային և հետցանքային աշխատանքները, մշակաբույսերի ցանքը, բույսերի ձևավորումը, պարարտացման, սնուցման և ոռոգման աշխատանքները, իրականացնել հողի և բուսերի պաշտպանության միջոցառումներ, վերահսկել ջերմատան միկրոկլիմայի ցուցանիշները, կազմակերպել բերքահավաքը, իրականացնել հողերի բարելավման միջոցառումներ, տալ հանձնարարականներ և հսկել դրանց կատարումը, հետևել անվտանգության կանոնների պահպանմանը:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Կազմակերպել նախապատրաստական աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	Ըստ մշակաբույսերի առանձնահատկությունների գնահատել հողի վիճակը, բացահայտել անհրաժեշտ աշխատանքների ուղղությունները և տեսակները Կատարել հողի նախացանքային փխրեցում Գնահատել սերմերի և սածիլների որակը, տեսակավորել դրանք Կատարել նախացանքային ախտահանման աշխատանքներ Սածիլները նախապատրաստել տնկման համար, Սերմերը նախապատրաստել ցանքի համար Պատրաստել հողախառնուրդներ Կատարել հողի նախացանքային սնուցում և հարստացում Ստուգել ոռոգման համակարգի վիճակը, սարքավորումների սարքինությունը
Կատարման չափանիշներ	ա. ջերմատան հողային միջավայրի և պայմանների վերաբերյալ

	տեղեկությունները ամբողջական և ճիշտ է, բ. ըստ մշակաբույսերի տեսակների հողային միջավայրի և պայմանների պահանջները որոշակիացված է, գ. պահանջվող լրացուցիչ բարելավումների տեսակները, աշխատանքների ծավալները որոշակիացված և հիմնավոր է, դ. փխրեցված հողի ցուցանիշները համապատասխանում են պահանջվող չափանիշներին, ե. սերմերի և սածիլների վիճակի գնահատման ցուցանիշները հիմնավոր է, զ. սերմերը և սածիլները տեսակավորված է հետգա օգտագործման համար նպատակահարմար ձևով, է. հողի և սերմերի ախտահանման գործողություններն ամբողջությամբ կատարված է, ը. ախտահանման համար կիրառված նյութերը ճիշտ է ընտրվել, թ. տնկման համար սածիլների նախապատրաստման գործողությունները ամբողջությամբ կատարված է, ցանքի համար սերմերի նախապատրաստման գործողությունները ամբողջությամբ կատարված է, ժ. հողախառնուրդների կազմը և քանակությունը ճիշտ հաշվարկված է, ժա. հողախառնուրդները պատրաստված է, ժբ. հողի նախացանքային սնուցման և հարստացման աշխատանքներն ամբողջությամբ կատարված է, ժգ. սարքավորումների և գործիքների կիրառումը ճիշտ է, ժդ. ոռոգման համակարգի պատրաստելիությունը ստուգված է, ժե. նախապատրաստական աշխատանքների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը լրացված է:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Կազմակերպել ցանքի և սածիլման աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	Սահմանել մշակաբույսերի ցանքի հիմնավորված հաջորդականության սխեմա Հաշվարկել սերմերի և տնկանյութի պահանջվող քանակությունները Ընտրել ցանքի և սածիլման աշխատանքների նպատակահարմար ձևեր ու եղանակներ Հրահանգավորել աշխատողներին

	Ընտրել անհրաժեշտ մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ Կատարել ցանք և սածիլում Կատարել հետցանքային խնամքի առաջին աշխատանքներ
Կատարման չափանիշներ	ա. տվյալ ժամանակի համար ընտրված մշակաբույսերի կազմը և տեսականին հիմնավոր է, բ. սերմերի և տնկանյութի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներն ամբողջական է, գ. ըստ առաջադրանքի սերմերի և տնկանյութի անհրաժեշտ քանակները հաշվարկված է, դ. ցանքի և սածիլման ընտրված ձևերը և եղանակները հիմնավոր է, ե. աշխատողների հրահանգավորման առանցքային հարցերը բացահայտված է, զ. աշխատողները տեղեկացված են աշխատանքների կատարման հիմնական հարցերում, է. ցանքի և սածիլման համար օգտագործվող միջոցներն ու պարագաները առկա են, ը. ցանքի գործողությունը ճիշտ է կատարվում, թ. սածիլների տնկման գործողությունը ճիշտ է կատարվում, ժ. հետցանքային խնամքի առաջին աշխատանքները կատարվել է ամբողջությամբ:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> Կազմակերպել մշակաբույսերի խնամքի աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	Ըստ մշակաբույսերի խմբերի և տեսակների կազմել խնամքի աշխատանքների ժամանակացույց Կատարել մշակաբույսերի սնուցման և պարարտացման աշխատանքներ Կատարել մշակաբույսերի ոռոգում Կատարել մշակաբույսերի ձևավորում Պայքարել վնասատուների դեմ, կատարել մշակաբույսերի բուժում Կատարել բուկլիցի, փխրեցման, նոսրացման, շարքերի ձևավորման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	ա. խնամքի աշխատանքների ժամանակացույցը հիմնավոր և ամբողջական է, բ. ըստ աշխատանքների տեսակների պահանջվող

	գործողություններն ամբողջական են, գ. սնուցման և պարարտացման չափաքանակները հաշվարկված է, դ. սնուցման և պարարտացման ծրագրավորվող ժամկետները և հաջորդականությունը որոշակիացված է, ե. սնուցման և պարարտացման աշխատանքների կատարման վերաբերյալ աշխատողների հրահանգավորումը կատարված է, զ. սնուցման և պարարտացման գործողությունները տեխնոլոգիապես ճիշտ է կատարվում, է. մշակաբույսերի ոռոգման ժամանակացույցը կազմված է, ը. ոռոգման չափաքանակները և ռեժիմները պահպանվում է, թ. մշակաբույսերի ձևավորման ժամկետները պահպանվում է, ժ. աշխատողները հրահանգավորված են մշակաբույսերի ձևավորման գործողությունները կատարելու հարցերով, ժա. մշակաբույսերի ձևավորումը ճիշտ է կատարված, ժբ. ըստ մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների հնարավոր ցանկը ամբողջական է, ժգ. վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների ժամանակացույցը կազմված է, ժդ. անհրաժեշտ բուժամիջոցների քանակությունները հաշվարկված է, ժե. աշխատողների հրահանգավորումը ճիշտ է կատարված, ժզ. մշակաբուսերը վարակված չեն, ժէ. բուկլիցի, փխրեցման, նոսրացման, շարքերի ձևավորման աշխատանքների ժամանակացուցերը կազմված է, ժը. աշխատողները ժամանակին հրահանգավորված են, ժթ. բուկլիցի, փխրեցման, նոսրացման, շարքերի ձևավորման աշխատանքները ժամանակին և ամբողջությամբ կատարված է:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u> Վերահսկել ջերմատան միկրոկլիման	
Աշխատանքային գործընթացը	Ըստ մշակաբուսերի տեսակների և ժամկետների որոշակիացնել միկրոկլիմայի պարամետրերը Սահմանված կարգով գրանցել միկրոկլիմայի պարամետրերի փաստացի ցուցանիշները Ապահովել ջերմատան միկրոկլիմայի անհրաժեշտ պարամետրերը

Կատարման չափանիշներ	ա. միկրոկլիմայի պահանջվող պարամետրերի ամբողջությունը ճիշտ ձևավորված է, բ. միկրոկլիման վերահսկող սարքերի ցուցմունքները ժամանակին գրանցվում է, գ. համապատասխան օղակների պատասխանատուները ստանում են անհրաժեշտ տեղեկությունները, դ. ջերմատան միկրոկլիմայի պարամետրերը նորմաների սահմաններում է:
<u>Խնդիրների բնագավառ 5.</u> Կազմակերպել բերքահավաք	
Աշխատանքային գործընթացը	Գնահատել բերքի հասունության վիճակը և առաջին բերքահավաքի հնարավոր ժամանակը Նախապատրաստել բերքահավաքի համար անհրաժեշտ սարքավորումները, մեխանիզմները, գործիքները, տարան Հավաքել և տեսակավորել բերքը
Կատարման չափանիշներ	ա. բերքի հասունության աստիճանը ճիշտ գնահատված է, բ. բերքահավաքը սկսելու ժամկետը հնարավորինս ճիշտ է որոշված, գ. բերքահավաքի համար անհրաժեշտ բոլոր պարագաներն առկա են, դ. բերքահավաքի համար աշխատողներն հրահանգավորված են, ե. բերքը անկորուստ հավաքված և տեսակավորված է, զ. բերքը ճիշտ է տարայավորված, է. անհրաժեշտ փաստաթղթերը լրացված է:
<u>Խնդիրների բնագավառ 6.</u> Կազմակերպել հետբերքահավաքային աշխատանքներ	
Աշխատանքային գործընթացը	Ըստ իրավիճակի կազմել հետբերքահավաքային աշխատանքների ցանկը և ժամանակացույցը Կատարել հետբերքահավաքային աշխատանքներ
Կատարման չափանիշներ	ա. հետբերքահավաքային անհրաժեշտ աշխատանքների ցանկը ամբողջական է, բ. աշխատանքների ժամանակացույցը կազմված է, գ. աշխատանքները լրիվ և ճիշտ կատարված է, դ. հողը պատրաստ է հաջորդ ցանքի համար:

III.Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Տեխնիկ-ագրոնոմը պատասխանատու է ջերմատնային տնտեսությունում, դրանում առանձնացված աշխատանքային տեղամասում ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին և ամբողջությամբ կատարման, տարածքի արդյունավետ օգտագործման, մշակաբույսերի բերքատվության բարձրացմանն ուղղված միջոցառումների կատարման, բերքի որակի ապահովման, կիրառվող տեխնիկական միջոցների ճիշտ օգտագործման, անվտանգության կանոնների պահպանության համար:
IV. Լեզուները	հայերեն- գերազանց ռուսաց լեզու- բավարար այլ օտար լեզու- բավարար
V. Համակարգիչը	ա. MS Word բավարար բ. MS Excel բավարար գ. Internet Explorer բավարար
VI. Գիտելիքները	Ջերմատնային տնտեսություններում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման առանձնահատկությունները Ջերմատնային տնտեսությունների տիպերը, դրանց հնարավորությունները Ջերմատնային տնտեսություններում հողի և գրունտի ձևավորման առանձնահատկությունները Բուսաբուծություն Ջերմատնային տնտեսություններում կիրառվող մեքենաները, սարքավորումները, գործիքները Մշակաբույսերի պարարտացման և սնուցման համակարգերը, կիրառվող պարարտանյութերի և սնուցող նյութերի տեսակները Մշակաբույսերի ոռոգումը ջերմատնային տնտեսություններում Մշակաբույսերի հիվանդությունները և վնասատուները, պայքարը դրանց դեմ Ախտահանման աշխատանքների անհրաժեշտությունը, նշանակությունը, ձևերը, կիրառվող նյութերը և իրականացումը Տնտեսության գործունեության հիմնական տնտեսական ցուցանիշները, դրանց հաշվարկը Ցանքաշրջանառություն Միկրոկլիման ջերմատնային տնտեսություններում Ցանքի և սածիլման աշխատանքներ Մշակաբույսերի ձևավորման մեթոդները
VII. Կարողությունները և	Մշակաբույսերի առանձնահատկություններին համապատասխան ցանքաշրջանառության հիմնավոր սխեմայի մշակման

հմտությունները	կարողություն Պարարտացման և սնուցման չափերը հաշվարկելու և ռեժիմները սահմանելու կարողություն Հողի փաստացի վիճակը գնահատելու կարողություն Գործիքներն ու սարքավորումները ճիշտ ընտրելու, ռեժիմները կարգավորելու կարողություն Տարածքի հիմնավոր պլանիրովկայի կարողություն Հողի և մշակաբույսերի հիվանդությունների ու վնասատուների ճանաչման, դրանց դեմ պայքարի կազմակերպման կարողություն Ջերմատնային տնտեսության միկրոկլիմայի կարգավորման և հսկման կարողություն Աշխատողներին հրահանգավորելու կարողություն Հողաբարելավման միջոցառումների կազմակերպման կարողություն Սերմերի ու սածիլների ընտրության և նախապատրաստման հմտություններ Բերքի հասունության գնահատման հմտություն Բերքի տեսակավորման հմտություն Ցանքի և սածիլման աշխատանքների կազմակերպման հմտություն Կատարված աշխատանքների արդյունքները գնահատելու հմտություն
VIII. Անձի որակական հատկանիշներ	-ազնվություն, -կարգապահություն, -պարտաճանություն, -աշխատասիրություն, -գործին և կոլեկտիվին նվիրվածություն, -վերլուծական մտածողություն, -սուր դիտողականություն, առանձնահատուկ իրադրություններում արագ կողմնորոշվելու և օպտիմալ որոշումներ կայացնելու ունակություն, -նորն ընդունելու պատրաստակամություն, -կոնֆլիկտները հարթելու ունակություն, -կամային բարձր հատկանիշներ, -հիմնավորված որոշումներ ընդունելու կարողություն, -ընձեռնված իրավունքների սահմաններում ինքնուրույն գործելու ունակություն: